(Վարչական վարույթի լուսմներն իրականացվել են պատշաճ ծանուցված Սարիկ Սերգեյանի, Լյովա Սերգեյանի, Ալվան Սերգեյանի և Նաիրա Սերգեյանի բացակայությամբ):

### **3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական մեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին, 16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ,

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Սարիկ Սերգեյանից, Լյովա Սերգեյանից, Ալվան Սերգեյանից և Նաիրա Սերգեյանից հոգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 293.333 (երկու հարյուր իննսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ՝ որպես հողի հարկի և անշարժ գույքի հարկի պարտքի գումար:

252.349 (երկու հարյուր հիսուներկու հազար երեք հարյուր քառասունինը) ՀՀ դրամ՝ որպես 06-039-0169-0473, 06-039-0164-0060, 06-039-0126-0082, 06-039-0114-0076, 06-039-0109-0007, 06-039-0101-0068 և 06-039-0072-0010 կադասրային ծածկագրերով, 3.145 հա ընդհանուր մակերեսով հողամասերի հողի հարկ, որից 154.933 ( հարյուր հիսունչորս հազար ինը հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 97.416( իննսուներեք հազար չորս հարյուր տասնվեց) ՀՀ դրամ՝ որպես տույժ ,

40.984 (քառասուն հազար ինը հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ՝ որպես անշարժ գույքի հարկ, որից 33.864 (երեսուներեք հազար ութ հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 7.120 (յոթ հազար հարյուր քսան) ՀՀ դրամ՝ որպես տույժ: Հաշվեգրել և բռնագանձել մայր գումար և տոկոսներ՝ սկսած 07.11.2023 օրվան հաջորդող օրվանից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց՝ և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից: 6. Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275085034 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275002039 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. նոյեմբերի 27

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 նոյեմբերի 2023 թվականի N 1225-Ա

**ՀԱՄԼԵՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ, ԳԱՌՆԻԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ, ԷՄԻԼՅԱ  
ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ, ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ԵՎ ՍՎԵՏԼԱՆԱ  
ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Համլետ Սուքիասյանը, Գառնիկ Սուքիասյանը, Էմիլյա Սուքիասյանը, Սյուզաննա Սուքիասյանը և Սվետլանա Սուքիասյանը, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի նոյեմբերի 07-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 06-039-0125-0011, 06-039-0164-0010, 06-039-0067-0006, 06-039-0101-0061 և 06-039-0144-0018 կադաստրային ծածկագրերով, 2.55 հա ընդհանուր մակերեսով հողամասերը հանդիսանում են Համլետ Սուքիասյանի, Գառնիկ Սուքիասյանի, Էմիլյա Սուքիասյանի, Սյուզաննա Սուքիասյանի և Սվետլանա Սուքիասյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում են հարկվող օբյեկտ :

Նշված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար կազմում է 260.006 (երկու հարյուր վաթսուհազար վեց) ՀՀ դրամ,որից 130.897 (հարյուր երեսուն հազար ութ հարյուր իննսուսույոթ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 129.109 (հարյուր քսանինը հազար հարյուր ինը) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

2023 թվականի նոյեմբերի 07-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի նոյեմբերի 27-ին հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չեն ներկայացել Համլետ Սուքիասյանը, Գառնիկ Սուքիասյանը, Էմիլյա Սուքիասյանը, Սյուզաննա Սուքիասյանը և Սվետլանա Սուքիասյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 17.11.2023) :

(Վարչական վարույթի լուսմներն իրականացվել են պատշաճ ծանուցված Համլետ Սուքիասյանի, Գառնիկ Սուքիասյանի, Էմիլյա Սուքիասյանի, Սյուզաննա Սուքիասյանի և Սվետլանա Սուքիասյանի բացակայությամբ):

### **3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին, 16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

1. Համլետ Սուքիասյանից, Գառնիկ Սուքիասյանից, Էմիլյա Սուքիասյանից, Սյուզաննա Սուքիասյանից և Սվետլանա Սուքիասյանից հոգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 260.006 (երկու հարյուր վաթսուն հազար վեց) ՀՀ դրամ՝ որպես 06-039-0125-0011, 06-039-0164-0010, 06-039-0067-0006, 06-039-0101-0061 և 06-039-0144-0018 կադասրային ծածկագրերով, 2.55 հա ընդհանուր մակերեսով հողամասերի հողի հարկ, որից 130.897 ( հարյուր երեսուն հազար ութ հարյուր իննսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 129.109( հարյուր քսանինը հազար հարյուր ինը) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից: 6. Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275085034 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. նոյեմբերի 27

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 9  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 նոյեմբերի 2023 թվականի N 1226-Ա

**ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԶԻՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ  
ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Զինա Հայրապետյան»-ի 2023 թվականի  
նոյեմբերի 24-ի N105 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Դպրոցականների փողոց,  
թաղամաս 9 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Զինա Հայրապետյան»-ի  
հայտը բավարարել և նրան տալ 2023 թվականի առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ  
եռամսյակների համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի  
վաճառքի թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա  
ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան  
թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՎԱՐ՝

ՏԱՇԻՐ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 նոյեմբերի 2023 թվականի N 1227-Ա

**ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ  
ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրմանի հավելված 1-ի 8.4 կետը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության, կրթության, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-5) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը՝

- 1) Արտաշես Աղիյան - Լոռու մարզպետարանին երկայացուցիչ,
- 2) Ռուզաննա Պողոսյան - Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
- 3) Հովիկ մարկոսյան - Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
- 4) Անժելա Մուկուչյան - Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
- 5) Ռուզաննա Ավդալյան - ավագանու անդամ,
- 6) Ասյա Տոնոյան - ուսումնական հաստատության ներկայացուցիչ:

2. Հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Սյուզաննա Սերյոժայի Սոլոյանին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 28

ք. Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 նոյեմբերի 2023 թվականի N 1228-Ա

**ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ  
ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրմանի հավելված 1-ի 8.4 կետը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետների (ծածկագիր՝ 3.2-15, ծածկագիր՝ 3.2-16) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը՝
  - 1) Արտաշես Աղլոյան - Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
  - 2) Ռուզաննա Պողոսյան - Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
  - 3) Սևադա Սարգսյան - Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
  - 4) Աշոտ Հակոբյան - Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
  - 5) Ադա Մովսիսյան - ավագանու անդամ,
  - 6) Հասմիկ Բաբայան - ուսումնական հաստատության ներկայացուցիչ:

2. Հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Սյուզաննա Սերյոժայի Սիլոյանին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 28

ք. Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 նոյեմբերի 2023 թվականի N 1229-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ  
ՏԱՇԻՐ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 199 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ  
ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Արմեն Աղասինի Ռաֆայելյանի (անձնագիր՝ AR0249620, տրված՝ 27.03.2017-ին) դիմումը (մուտք՝ 27/11/2023-ի ՔԴ-1349-23), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 2834697, «ԳՈՒԳԱՐԱՅ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, կադաստրի կոմիտեում հաշվառված թիվ 2023Y5KYBQ ծածկագիրը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ Կառավարության 29 ապրիլի 2021 թվականի N 698-Ն որոշումով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված՝ կարգի, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 13-րդ կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 5-ի 14-Ն որոշումով, նկատի ունենալով որ 2020թ-ին կառուցված ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հաշվի առնելով որ փաստացի չափագրման արդյունքում որակավորված անձի կողմից կազմված հատակագծում հողամասի մակերեսը կազմում է՝ 0,084558 հա

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 199 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0117-0013) սեփականության իրավունքով պատկանող Արմեն Աղասինի Ռաֆայելյանի կողմից բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,084558 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 79,6 քմ ընդհանուր մակերեսով շինությունները համաձայն «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

- 1) ծածկ՝ 41,9 քմ
- 2) բաղնիք՝ 19 քմ
- 3) սանհանգույց՝ 1 քմ
- 4) հարթակ 17,7 քմ

2. Պարտավորեցնել ինքնակամ կառույցն իրականացնող Արմեն Աղասինի Ռաֆայելյանին սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել (հաշվեհամար՝ 900275081124) ինքնակամ կառույցի օրինականացման համար սահմանված վճարը՝ ընդհանուր շինության համար 81830 (ութսունմեկ հազար ութ հարյուր երեսուն) ՀՀ դրամ:

3. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. նոյեմբերի 28

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 նոյեմբերի 2023 թվականի N 1230-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ  
ՏԱՇԻՐ ԳՐԻԲՈՅԵՂՈՎԻ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 5 ՀԱՍՑԵՈՒՄ  
ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ  
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Իշխան Միշիկի Դալալոյանի (նույնականացման քարտ՝ 009455759, տրված՝ 03.08.2018-ին) դիմումը (մուտք՝ 24/11/2023-ի ՔԴ-1347-23), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 03032020-06-0046, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, կադաստրի կոմիտեում հաշվառված թիվ 2023HDQXKU ծածկագիրը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 13-րդ կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի 14-Ն որոշումով, նկատի ունենալով որ 2020թ-ին կառուցված ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Գրիբոյեղովի փողոց, 5-րդ թաղամաս, թիվ 7/3 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0111-0045) սեփականության իրավունքով պատկանող Իշխան Միշիկի Դալալոյանի կողմից բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,04208 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 98,7 քմ ընդհանուր մակերեսով շինությունները համաձայն «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

1) ծածկ՝ 57,3քմ

- 2)ավտոտնակ՝36,9քմ ընդհանուր մակերեսով,  
3)պարիսպ՝4,5քմ ընդհանուր մակերեսով,

2. Պարտավորեցնել ինքնական կառույցն իրականացնող Իշխան Միշիկի Դալալոյանին սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել ( հաշվեհամար՝ 900275081124) ինքնական կառույցի օրինականացման համար սահմանված վճարը՝ ընդհանուր շինության համար 101465 (հարյուր մեկ հազար չորս հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ:

3. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. նոյեմբերի 28

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

01 դեկտեմբերի 2023 թվականի N 1231-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ  
ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 10/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ  
ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ  
ՀԱՄԱՐ ԱՌԱՋՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 34.2-րդ կետով, 35-կետի դ) ենթակետով և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Տաշիրի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1055-Ն որոշումով և հաշվի առնելով ինքնակամ կառույցն իրականացրած Սանամ Սպիրիդոնի Տոմեյանի համաձայնությունը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Համայնքային սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 28112023-06-0043 վկայական) ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Դպրոցականների փողոց, թիվ 10/1 հասցեում գտնվող շինությունը՝ 40,1 քմ մակերեսով ավտոտնակը և դրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.0065 հա մակերեսով հողամասը ուղղակի վաճառքով օտարել ինքնակամ կառույցն իրականացրած Սանամ Սպիրիդոնի Տոմեյանին:

2. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկներով՝  
1) շինության 1 քառակուսի մետրի համար՝ 1028 (մեկ հազար քսանութ) դրամ (տարածագնահատման 15-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0,1028).  
2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 792 (յոթ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ  
3. Սանամ Սպիրիդոնի Տոմեյանը պարտավոր է Տաշիր համայնքի բյուջե վճարել՝  
1) համայնքապետարանի 900275081090 հաշվեհամարին՝ 41230 (քառասունմեկ հազար երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամ՝ շինության գինը.  
2) համայնքապետարանի 900275081280 հաշվեհամարին՝ 51480 (հիսունմեկ հազար չորս հարյուր ութանասուն) ՀՀ դրամ՝ հողամասի գինը.

4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է կառույցն իրականացրած Սանամ Սպիրիդոնի Տոմեյանի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 01

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

01 դեկտեմբերի 2023 թվականի N 1232

**ԱՐԱՅԻԿ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՐԴՈՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով քաղաքացի Արայիկ Գրիգորի Մարդոյանի դիմումը (մուտք՝ 30.11.2023-ի. ՄՀ 161-23)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Արայիկ Գրիգորի Մարդոյանին տալ ծածկարանի կառուցման նախագծման թույլտվություն:
2. Արայիկ Գրիգորի Մարդոյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023թ. դեկտեմբերի 01

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

01 դեկտեմբերի 2023 թվականի N 1233-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ  
ՏԱՇԻՐ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 14-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 383 ՀԱՍՑԵՈՒՄ  
ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ  
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լալա Միքայելի Նարգիզյանի (անձնագիր՝ AR0690588, տրված՝ 16.05.2018-ին) դիմումը (մուտք՝ 13/11/2023-ի ՔԴ-1303-23), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը N 20112018-06-0025, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, կադաստրի կոմիտեում հաշվառված թիվ 20237JM5B4 ծածկագիրը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ Կառավարության 29 ապրիլի 2021 թվականի N 698-Ն որոշումով, «Տեղական ինքնակառվարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն. որոշումով հաստատված կարգի, 9-րդ, 11-րդ, 17-րդ և 18-րդ կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի 14-Ն որոշումով, նկատի ունենալով որ 2014թ-ին կառուցված ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված է ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հաշվի առնելով որ փաստացի չափագրման արդյունքում որակավորված անձի կողմից կազմված հատակագծում հողամասի մակերեսը կազմում է՝ 0,099919 հա

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Երևանյան փողոց, 14-րդ թաղամաս, թիվ 383 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0400-0093) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Լալա Միքայելի Ա/Ձ (1/2) և Տոդիկ Ստեփանի (1/2) Նարգիզյանների կողմից բնակավայրերի հասարակական կառուցապատման 0,099919 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 71,95 քմ ընդհանուր մակերեսով շինությունները համաձայն «Գուգարաց

Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

- 1) պահեստային մաս՝ 64,10քմ,
- 2) կաթսայատուն՝ 4,35քմ,
- 3) պարիսպ՝ 3,50քմ,

2. Պարտավորեցնել ինքնական կառույցն իրականացնող Լալա Միքայելի Ա/Ձ (1/2) և Յողիկ Ստեփանի (1/2) Նարգիզյաններին սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել ( հաշվեհամար՝ 900275081124) ինքնական կառույցների օրինականացման համար սահմանված վճարը՝ ընդհանուր շինությունների համար 148000 (հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ:

3. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 01

ք.Տաշիր

